



ՉԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)


15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 13)



ԲՈՎ Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Եռանդր. Երուսնդ. Արմաբեղիսանդեան. — Միլան եւ Պեռն, Ա. — Գիտական արձագանգ (խմբագիր), Տրեթ. Յ Արթինեան. — Փողովրդական բարեբ. (աշխարհ), Ե. Արմաբեղիսանդեան. — Հնախօսական (պէտ և լեռն). — Պոլսական նամականի, Մժղուկ. — Կիսամսեակ :



ՏՊԱՐԱՆ ԱՐՆԻԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

»» Շ Ա Ի Ի Ղ ««

Կը հրատարակուի թմէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք,
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք,
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգին, նամակ, յօդուած, լրագիր և զերք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Զհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շառիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա.
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆՊԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Թիւ 13

ԵՌԱՆՊԸ



Մեր ժողովուրդը ա՛լ պէ՛տք է չունի եռանդի: Հարկ է որ եռանդին ոչ միայն անօգուտ հապա վնասակար բան մը ըլլալը հասկնալու չափ խելացի ըլլանք այսուհետեւ:

Ասիկա այն յեղիցներէն մէկն է, զոր յաճախ պատահութիւնը ունեցած ենք լսելու « յեղափոխական » ներու բերնէն, բայց այն յեղափոխականներուն որոնք հիմա « հանգիստի կոչուած » են՝ փոթորկալից գործունէութենէ մը ետքը, խորին համոզում գոյացուցած ըլլալով թէ ա՛լ ու է ձեռնարկ՝ ազգային դատին յաջողութեանը համար ի գործ դրուած՝ վնասակար միայն կրնայ ըլլալ, ու ձգելու է որ — բնական եզրակացութեամբ — հայ ժողովուրդը բախտին բերնէն չեներուն տայ ինքզինքը՝ հոգ չէ թէ ջարդուելով հարստահարուելով կը հասնի կը լմնայ եղեր:

Անհրաժեշտ պայմաններէն մէկը որպէս զի ազգը այսուհետեւ չունենայ ընդվզումի խլրաում մը, հարկ է եղեր, և անհրաժեշտապէս, ամէն ջանք ու ճիգ թափել ժողովրդեան հոգիէն եռանդը, յիմար, ապուշ ու անօգուտ եռանդը վանելու անհետացնելու համար:

Սարկաւթեան լուծին տակ՝ դարուոր քունէ մը ետք՝ յանկարծ թոթուելու ժողովուրդ մը նորէն իր առաջուան հոգեկան տրամուգութիւններուն, այսինքն անտրտուն յարկութեան մը անբանտցումին վերագործներու համար աւելի արմատական, աւելի նպատակայարմար միջոց մը անկարելի էր առաջարկել: Քանի որ յեղափոխութիւնը՝ գերուած ժողովուրդներու ազատումի յուսահատ ու գերագոյն գործունէութեան եռանդին բունն, անզուսպ ու գիւցազնական արտայայտութիւնն է, ճիշտ այդ եռանդը զարնելու սպաննելու է եղեր՝ վնասակար դատուած յեղափոխութեան տուա՛քը տանելու համար:

Ազգային եռանդը մշտապէս պա-

հերու նպատակով թափուած ջանքերը յիմարութիւն դաւանող խելացիները անշուշտ չեն պահանջեր որ ազգին մէջ յեղափոխութեան գործը անդուլ կերպով շարունակուի՝ առանց այն եռանդին որ պիտի ըլլայ ինչ որ շուքին է մեքենակաւորութեան համար : Իրենք , այս նորագաւանները , տրամագծապէս հակառակ են ուրեմն յեղափոխութեան , ու անոր բոլոր սկզբունքներուն :

* * *

Սակայն , ո ե է դիւրամացութեան տեղի չտարու համար , ճշտանք եռանդ բառին սահմանը :

Ի՞նչ է այն զգացումը որով վաճառականը կը յաջողի զտրկ տալ իր գործերուն , շահու ազբիւրները մշտադոս պահել , իր հարստանալու մարմնաշնորհուն գոհացում տալ , և հասնիլ նիւթական այնպիսի վիճակի մը , որուն ուրիշները մտխանքով նային : Գործունէութեան պզտիկ թուլացում մը այն թափին մէջ որով անիկա իր գործերը յաջող դրութեան մը հասցուցած էր , ամէն բան վերիվայր չպիտի շրջէր ու փճացնէր :

Ազգային կամ հանրային գործերու վարչութեան մէջ ընդհանուրին հաւանութեանը և սքանչացումին տրժանացող գործիչը առաւելապէս իր ո՞ր յատկութեանը կը պարտի օգտակար մտրդ մը հանդիսացած ըլլալու գոհացումը :

Դաստիարակութեան վաստակաւորներէն որո՞նք մանաւանդ կրնան զգալ պարտականութեան կատարումի անուշ ու սիրտալի գոհունակութիւնը , և ի՞նչ զգացումով մը ստգորուած են անոնք :

Ո՞րն է այն ուժը որ յաջողութեամբ պսակած է աշխարհի բոլոր այն գործերը , որոնք անվհատ աշխատութեան , անդուլ հետապընդումի կարօտ էին :

Վերջապէս ո՞րն է այն լծակը որուն շարժման առջեւ բոլոր արգելքները կանխարտանան , դժուարութիւնները կը փչրուին , և անհնարինը հնարաւոր կը դառնայ :

— Եռանդը :

Վաճառականը իր բոլոր խորիմաց հնարքներովն ու փորձառութեամբը չպիտի հասնէր իր տենչանքին եթէ եռանդը պակսէր իրեն : Ազգային կամ հանրային գործիչը դրուատիքի ու երախտագիտութեան դափնին չպիտի կրնար խել եթէ իր խել մը առտքինութիւններուն հետ եռանդ ալ չունենար : Ուսուցիչը , առանց եռանդի , ամուլ տարր մը պիտի ըլլար իր բոլոր պայմանագրական ու բռնազբօսիկ մեթոտներովը :

Յառաջդիմութիւն , քաղաքակրթութիւն և ուրիշ կարգ մը սուկեզօժ բառեր մեռած տառ պիտի մնային եթէ մարդուս ներսիդին չը հրգեհուէր այն նուիրական հուրո-

վը , զոր եռանդը բառով կը սահմա-
նեն :

Եռանդը մտքի մտրորանքը , զգա-
ցումներու մոլեգնութիւնը չէ . անոր
մէջ երազ ու զառանցանք չիկայ .
ամենէն գեղեցիկ , աղնիւ , նուիրա-
կան զգացումն է որմէ կը վարուին
ժողովուրդները իրենց բոլոր ճրգ-
առւմներուն , իրենց բոլոր ըղձանք-
ներուն իրագործմանը համար :

* * *

Հասո՞ծ ենք այն կացութեան ուր
միայն յեղափոխութիւնը պիտի
հարկէ մեր ընթանալիք ճամբան :

Կարծեմ շատ քիչ հայեր կան որ
բացասական կերպով պատասխանեն
այս հարցումին :

Ուրեմն յեղափոխութիւնը գրու-
թիւն մըն է որուն պիտի հետեւի
հայութիւնը : Արդէն , սկիզբէն ի
վեր , մեղի պէս գերուած , ճնշուած ,
աանջուած ու հարստահաբուած ազ-
գերուն ընդգրկած միակ մեթոտը
աս եղած է :

Բայց յեղափոխութիւնը գլուխ
հանելու համար գերազանցօրէն ան-
հրաժեշտ է որ ժողովուրդը եռանդ-
ունենայ միշտ , ոչ այն զառանցա-
կան , ցնորազին եռանդը որ կոչըս-
տեան վերապը կառաջնորդէ , հա-
պա վրէժխնդրութեան և արատու-
թեան ներշնչած այն գրեթէ տառ-
ուածային խանդը , այն սնմարելի
կրակը որ ելեքտրական հսկայազօր

բարդի մը պէս պիտի շարժէ , վազ-
ցունէ , խուժել տայ ամբողջ հայու-
թիւնը դէպի վսեմ նապատակա-
կէտը՝ իր անմուռանալի կորուստ-
ներուն ու կակիժներուն թելազ-
րութեանը տակ :

Եռանդ Մամաթխանլեան



ՄԻԼԱՆ ԵՒ ՊԵՌՆ

Իրիկուան դէմ թողուցինք Միլան
քաղաքը՝ Պէնն դառնալու համար .
երկուքն ալ մայրաքաղաք , մէկը՝ Լոմ-
պարտիոյ , միւսը ազատ Զուիցերիայի .
երկուքն ալ , տարբեր ձևերու տակ ,
գեղեցիկ :

Բնութիւնը շատ ժլատ գտնուած է
Միլանի հանդէպ , բազմաձ առնայրա-
ծիւր դաշտի մը մէջ որ Ապէնեաններէն
մինչեւ Մեծ Լիճերը , Մաճիորէ , Կո-
մոյ , Լուկանոյ և Սալուսայէն մինչեւ
Ազրիականի ափերը կը տարածուի :
Միլան չունի բլուր մը իսկ որուն
կրթնի . Ատիճէի ու Բոյի հովտին մէջ ,
բայց ասոնցմէ հեռի , ստիպուած է
ջրանցներով հայթայթել իր ոռոգման
անհրաժեշտ ջուրը :

Հոլանի ու անպատուար՝ Լոմպար-
տիոյ արգաւանդ դաշտերուն մէջ , սրբ
իւ վրայ քաշած են դարերու ընթաց-
քին մէջ անյազ գրացիներուն վազքն
ու արչաւանքը , Միլան գտնուած է
փոխնիփոխ օտար սէրերու , Սպա-
նիացոց , Ֆրանսացոց , Աւստրիաց-
ոց լուծին տակ նուաճուած :

Սակայն մարդը կրցած է հոն բը-

նութեան պակասը լրացունել. մարդկային հանճարը կրցած է արտադրել իր հոյակապ հրաշակերտը, Մաճիորէյի ափերուն ձիւնապիտակ մարմարեօններէն կերտելով Միլանի Մայր Եկեղեցին:

Դիւթիչ է տեսիլն ու տպաւորութիւնը ազգու, երբ գիշերը, լուսնակի շողով, Գորսոյ Վիթթորէմմանուէլէի անկիւնէն դիտես այդ սպիտակ մարմարի հիանալի կերտուածը որ կանգնազեղ կոյսի մը նման կը կարկառի դէպի երկինք իր օդասլաց սիւներուն, սրբանիստ խորչերուն, հովանաւոր արձաններուն ժանեակներովը պաճուճուած ու լուսնակին կապուտակ ճաճանչներուն մէջ ոլորուն:

Ու Միլանի հոյակերտ կոյսը նոյնքան, չըսեմ աւելի, գեղեցիկ է որքան Պէռնի Օպէռայեղին, վերնագաւառին ձիւնապսակ Յունկեբաուս (1) որ Թունի եւ Պրիէնցի լճակներուն ծաւի ալեակներէն վեր կը բարձրանայ, արեւու ճառագայթներուն տակ իր սպիտակ շղարչին մէջ պսպղուն, ու իր ստինքէն ծորող կաթնաթոյր Լիւչինը որ Կրինտըլվարտէն իջնող Սեւ Լիւչինին հետ խառնուելով գետակ մը կը կազմէ, կուգայ սնուցանել Պրիենցի գեղախոյս լճակը Աար գետէն կազմուած:

Միլանի Մայր Եկեղեցին սկսուած է ԺԴ. դարուն Վիսկոնզի ընտանիքին նախաձեռնութեամբ եւ ԺԹ. դարուն սկիզբը Մեծն Նաբոլէոն աւարտողներէն մեծագոյնն եղաւ այս սըրբարանին ու իտալիոյ թագաւորին:

(1) Յունկեբաուս կը նշանակէ հարազ կոյս. օյսպէս կը կոչուի Պէռնի գաւառին բարձրագոյն սառնարանը:

րուն երկաթեայ պսակը գրաւ իր գըլուխը: Այս հինգ դարերու ընթացքին մէջ իրարու յաջորդող ճարտարապետները, քանդակագործներն ու նկարիչները հոն կուտակեցին իրենց հանճարին լաւագոյն արտադրութիւնները, որոնց շուայ ճոխութիւնը սրբառուած է մինչեւ աննշան անկիւնները:

Միայն Մայր Եկեղեցին բաւական էր քաղաքին փառքը կազմելու. սակայն Միլան, որու փողոցները Ռափայէլի, Լէոնար տը Վինչիի, Տանիէլի, Մանցոնիի անունները կը յիշեցունեն, լի է այդ մեծահանճար արուեստագէտներուն գործերովը. Սանթա-Մարիա տէլլա Կրացիայի եկեղեցին ուր կը գտնուի Լէոնար տը Վինչիի համբաւաւոր նկարը, Յիսուսի իր աւակերաց հետ ընթրիքը վերնասան մէջ, Սան-Լորէնցոյի հինաւուրց տաճարը, Վիգորէ Էմմանուէլի հոյակապ կալըրիները, Սկալայի հռչակաւոր թատրոնը, Պրէրայի պալատն իր նկարչական ճոխ հաւաքածոներով ուր կայ պահուած, իբր գոհար անդին, Ռափայէլի կոյսին ամուսնութիւնը:

Հրապարակին վրայ, ուր կը միանան Վիա Տանին ու Վիա Պալէստրոյ փողոցները, կունակը հասարակաց պարտէզին, կը կանգնի այս դարուս մէկ մեծ քաղաքապէտին ու իտալացի հայրենասէրին՝ Գալուրի արձանը. կարմիր կրանիթէ պատուանդանին վերեւ կեցած, ձեռքն ունի հրովարտակը որով կրցաւ, Նաբոլէոն Գ. ի օգնութեամբ, Միլանը Աւստրիացեոց խուժողութ լուծէն ազատել ու միացընելով զայն Սաւոնաի տան ի գըլուխ հանել իտալական միութիւնը զոր պատրաստած էին Մաճիորի եւ կարիպալաի:

Պատմութիւնը, նրբագիծ գեղջուհի, իր երկաթեայ գրոցով կրանիթին մէջ կը քանդակէ Պավուր անունը:

* * *

Միլանի խորհրդանշանն է օձ մը որ կոկորդին մէջ ունի մանուկ մը, ցուցնելով թէ դաշտի քաղաքն ու դաշտայինները կը սահին յաճախ գետնասող թշնամոյն առջեւ ու խորամանկութեամբ եւ նրբամտութեամբ կը ճողոպրին ու կը յաղթեն իսկ Միլանի պատմութիւնն է այս:

Պէննի խորհրդանշանն է լեռնային արջ մը յաղթանդամ որ այս ազատ քաղաքին նկարագրին իսկ կ'ուրուագծէ:

Ձուիցերիա գրեթէ միշտ ազատ եղած է օտար լուծերէ շնորհիւ իր անմատոյց լեռներուն, քաջամարտիկ ու չարքաչ զաւկներուն, որոնք մինչեւ դարուս սկիզբները եւրոպական վարձկան բանակներուն ընտրեալ զինուորները կը կազմէին. հին ժամանակ աշխարհակալները, որոնք կերթային նուաճել հեռաւոր երկիրներ, միշտ զգուշացած են անոր կերճերուն լաբիւրինթոսին մէջ թաղել իրենց բանակները, ու միայն անոնց բոլորտիքը պարտած են:

Բայց այդ կլիման ու լեռները որ հին դարերու մէջ Ձուիցերիոյ անկախութեան մեծագոյն շատարը եղած էին, այսօր իր հարստութեան գլխաւոր աղբիւրներէն մին կը կազմեն: Պէննի Օպէպլանուր Եունկֆրաուի, Հոնոսի սառնարաններով, Թունի, Պրէնձի գեղազմայլ լիճերով, Պալ, Յուրիխ, Փընէլ, Լօզան ու իրենց համալսարանները, Լէյդինի, Տավոսի ծիւրախտաւորներու յատուկ սանադո-

ւրիւմները, ու զանազան դարմանատունները իրենց կը քաշեն ամէն երկիրներու հարուստ ու զարգացած դասակարգը, ու Ձուիցերիացիին այդ շփումը բոլոր քաղաքակիրթ երկիրներու ամենէն յառաջացած դասերուն հետ, որոնք իրեն կը բերեն իրենց ոսկիները, խթան մըն է իրեն համար զարգացման. հոն իր երկրին մէջ, առանց տեղափոխուելու, Ձուիցերիացին կ'ուսումնասիրէ այդ զանազան ազգերուն պահանջները, կը ծանօթանայ անոնց առաւելութիւններուն հետ, ու այսպէս այսօր Ձուիցերիա կը գտնուի առաջնակարգ երկիրներու կարգին մէջ իր ճարտարարուեստներով ու գիտական եւ կրթական զարգացումով:

Պէնն գուիցերիական իսկատիպ քաղաքի մը գաղափարը կրնայ տալ իր հինաւուրց, միջնադարեան փողոցները զուիցերիացիին աւանդական ոգին կը ցուցունեն, մինչդեռ իր ուսումնակտն, արուեստագիտական, ճարտարակտն հաստատութիւններն իրենց կատարելագործութիւններով՝ գործնական ու յառաջընթաց մտքի մը հաւաստիքն են:

Պէնն կառուցուած է Աար գետին վերեւ, բլրադաշտի մը վրայ. իր ըստորեւ Աար կը պատէ քաղաքը երեք կողմէ ու Պէնն կը բարձրանայ իրբեւրոյն մը դալարներով շաղապատուն:

Պէնն կը նշանակէ գերմաներէն առջ, որովհետեւ երբ Պէրթոլտ տը Յայրիկըն հիմնեց զայն, հոն գտտաւ արջ մը զոր սպաննեց. մինչեւ ցարդ Պէնն քաղաքը կը պահէ քանի մը արջեր մասնաւոր փոսի մը մէջ:

Ինքզինքդ բացարձակապէս Միջին Դարու մէջ կը կարծես պարանելով հին Պէննը. լայն փողոցները երկու կող-

մէ թանձր կասարներով ստուեր-
ուած են. տեղ տեղ փողոցներուն մէջ-
տեղը կը բարձրանայ գոյնզգոյն խա-
տուտիկ կոթողներ տարօրինակ ու
առասպելական հինաւուրց արձանիկ-
ներով. այդ կոթող աղբիւրներէն կը
հոսի վճիտ ջուր մը որ գրչալով ման
կուզայ փողոցները ու կը սահի կեր-
թայ կորուելի Աարի մէջ: Միօրինակ
կարմիր բարձեր զուարթ ու միան-
գամայն լուրջ երեւոյթ մը կուտան
կանանչ փեղկերով պատուհաններուն
որք կը շրջանակեն մերթ սեւ չփա-
կով ու սպիտակ թեզանիքով պէսնու-
հիներու շնորհալի սիլուէզը:

Հետաքրքրական է մանաւանդ ժա-
մացոյցի աշտարակը որուն պատին
վրայ կան երկու ցուցակներ (cadran),
մէկը ժամերը ցուցնող, իսկ միւսը,
աւելի բարդ, ցոյց կուտայ ամիսը,
օրը, լուսինն քառորդները, Չողիա-
կոսի նշանները, ու պատին չորս կող-
մերը կը պատկերացնեն տարւոյն չորս
եղանակները: Ստորեւ, ձախ անկիւ-
նը բազմած կայ ալեղարդ ծերունիի
մը արձանիկը, երկու կողմն ունենալով
աքաղաղ մը եւ արջ մը: Ս,մէն ժա-
մու, քանի մը վայրկեան առաջ, թո-
ժիւններու պար մը կը գառնայ ծե-
րունիին պատուանդանին շուրջը, յե-
տոյ աքաղաղը կ'երգէ, արջը կը խան-
չէ ու ալուոր ծերունին, ժամանակին
խորհրդապատկերը, կը շրջէ աջ ձեռ-
քի աւաղի ժամացոյցը ու շրթամբ
աղօթելով՝ ձախ ձեռքի գաւազանը կը
չարժէ ժամացոյցի իւրաքանչիւր հար-
ուածին:

Պէսն զուիցերիական դաշնակցու-
թեան մայրաքաղաքն է. երկրին 22
գաւառները (canton) ինքնուրոյն ու
իրարմէ բոլորովին անկախ կը կառա-

վարուին ու կը տնօրինեն իրենց մաս-
նաւոր, ներքին գործերը, իսկ հա-
սարակաց, ընդհանուր խնդիրներու
համար իրենց երեսփոխանները կը
ժողովուին Պէսնի Դաշնակցական Պա-
լատին մէջ (palais fédéral): Ներ-
կայ գտնուեցայ երեսփոխանական
ժողովի մը. սրահը պարզ է ու ան-
պաճոյճ: Զուիցերիական պատմու-
թեան գլխաւոր դէպքերը յիշեցնող
պատկերներ կան կախուած պասերէն.
մէկը կը ներկայացնէ Կիյեոմ Թէլի
պատմութեան այն անցքը ուր մեծ
հայրենասէրը Չորս Գաւառներուն
լճին վրայ (lac des quatre cantons)
փոթորկի ժամուն ալեաց մէջ կը մղէ
հայրենիքի թշնամիներուն նաւակը:
Երեսփոխանները լռիկ, խելօք աշա-
կերտներու նման պարութաներով
ճանրաբեռնուած՝ գրասեղաններուն
վրայ հակած՝ ունկն կը դնեն բանա-
խօսին. ու գերմաներէն, ֆրանսերէն
ձառեր իրարու կը յաջորդեն:

Սիրտս սեղմուած դուրս կելլամ
Դաշնակցական Պալատէն: Միտքս
ակամայ կը սաւառնի դէպի Ասիոյ
Զուիցերիան իր վեհափառ Արարատու-
վը, իր Տոսպայ լճին կապուտակ ալի-
քոֆն ու իր պատմական խնկոտ յի-
շատակներու օրտածմէիկ հեռապատկե-
րովը, ու Կայծերի երազին յափշտա-
կութեանը մէջ քայլերս կը կթոտին
երբ օտարութեան զգացումը կուզայ
հիասթափ ընել զիս:

Ս.



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ժ Ա Ն Տ Ա Խ Տ

(Շարանախոսութեան հարստութեան և վերջ)

Ժանտախտին եւրոպայ անցքն արգիւնը համար հարկ է հսկողութիւն կատարել Պարսից Մոյին բերանը, Շաթ-էլ-Արապի բերանը և ուրիշ մէկ քանի կարեւոր կէտերու վրայ:

Պարսից ծոցին բերանը արգէն կը կատարուի պէտք եղած հսկողութիւնը, սակայն Շաթ-էլ-Արապի բերանը՝ չպատճառը այնէ որ Անգլիայ կը հակառակի իր վաճառականութեան վնաս չհասնելու համար: Աւելինի ժողովուրդը ժանտախտէն չի վախնար, անոր համար որ ախտին թխտումը 5-6 օր կը տևէ ու չիրնար տեսել մինչև նաև մը անգլիական նաւահանգիստները հասնելը (1):

Առողջապահական շղթան որ լուարգիւնըներու աւ իտալական Նօթա գիւղաքաղաքին համար, անհրաժեշտ պէտք է գործադրել ամէն տեղ: Լօրիս Մէլիքօֆ 1878 ին առողջական շղթայով յաջողեցաւ ժանտախտը ջնջել Աստրախանի մօտ:

(1) Թէև այսօր Սիպտիոյ մէջ ժանտախտ կը գտնուի և Բարբի բաթէօրեան հաստատութիւնէն շեճուկ կը խրկուի հոն: Ծ. Խ.

Մուկերը սրտը էն մեծ վարակողներն են այս ախտին, պէտք է չարաչար հալածուին և ջնջուին:

Բաթէօրեան կաճառին տնօրէն Բրօֆ. Գալմէդի կարծիքով Օբօրթօի ժանտախտը առաջ եկած է վարակուած տեղերէ եկած բամպակի հակերուն մէջ պահուրած մուկերէ: Գալմէդ անցեալները Բարիզի բժշկական ընկերութեան առաջարկեց հետեւեալ միջոցները. Ա. առանց բացառութեան փոխադրել և մեկուսացնել ժանտախտաւորները մասնաւոր հիւանդանոցներու մէջ. Բ. Աւրել ժանտախտաւորներու բնակարանները, իսկ եթէ մեծարժէք են, օգտուրել և հակա նեխել զանոնք:

Դիտուած է որ ժանտախտը, առ հասարակ, ամենէն աւելի աւեր և մահ կը գործէ նեղ, աղտոտ փողոցներու և աղքատ թաղերու մէջ և ամեն անգամ որ լէյրէն այրեց Աննամի գիւղերուն մէջ վարակուած հիւղակները իրենց մուկերով և լուերով, ժանտախտը դադրեցաւ այդ տեղերուն մէջ:

Գ. Անթերի պատուաստել ժանտախտաւորներու մօտ դոնուողները, հիւանդապահ, բժիշկ եւ այլն:

Դ. կանոնաւորապէս ջնջել մուկերը առանց երբեք ձեռքով անոնց դպչելու. կարելի եղածին չափ հականեխել կոյուղիները, խանութները և բնակարանները:

Բասթօր ու իր անխոնջ աշակերտները Ռու, Եէրսէն և Գալմէդ օժտած են գիտութիւնը այնպիսի ծանօթութիւններով և միջոցներով որ այսօր ոչ միայն կարելի է ժանտախտը դարմանել այլ և բուժել :

Ժանտախտը՝ կռուփէն (գուշ պողան) ու պիսակ, ծաղիկ հիւանդութիւններէն աւելի վտանգաւոր չէ : Եէրսէնի հակաժանտ շիճուկը կամ Լոֆթինի հակատենդային պատուաստը ամէն վտանգ կը հեռացնեն :

Նախ Գալմէդ, Պուէլ և յետոյ Եէրսէն բասթօրեան կաճառէն՝ ըսկըսան փորձեր կատարել գտնելու համար ժանտախտի հակազեղը : Առին նոյն ախտի պատկիներէն, մշակեցին զանոնք արդանակի մէջ ուր տճեցան և բազմացան մինչև կորսնցուցին իրենց ժահրաւորութիւնը (virulence), թունաւորող հանգամանքը. յետոյ այդ մշակուած պատիւնները մէկ ժամ 58 աստիճան տաքութեամբ մեռցնելէ վերջ, մուկերու և հնդիկ ճագարներու պատուաստեցին :

Տեսան որ այդ կենդանիները թեթեւ մը կը հիւանդանային և յետոյ աւողջանալով այլ ևս անզգայ կը մնային ժանտախտին, այսինքն ախտազատ (immunisé) կըլլային :

Եւ երբ Եէրսէն 1894 ին կառավարութեան կողմանէ Լոնկ-ֆոնկ խրկուեցաւ, գործադրեց հոն այդ պատուաստի գրութիւնը մարդերու վրայ ալ, մշակուած պատիւնները նախ

ձեռն պատուաստելով և յետոյ անոր արիւնին շիճուկը ներարկելով մարդուն և այսպէս հաստատեց որ արդարև բասթօրեան գրութեամբ և Ռուի հետեւողութեամբ (որ փորձած և յաջողած է կռուփի համար) պատրաստուած այդ շիճուկը հրաշալիքներ ընելու կոչուած է :

1896 ին անգլիական կառավարութիւնը հրաւիրեց Եէրսէնը Պոմպայի մէջ կատարելու իր փորձերը, ուր սակայն շատ չյաջողեցան այն պատճառաւ որ գործածուած շիճուկը հապճեպով շինուած էր, մինչդեռ յայտնի եղաւ որ առնուազն մէկ մէկուկէս տարի պէտք է անոր կատարեալ պատրաստութեան համար և մէյ մըն ալ Պոմպայի մէջ եղած ժանտախտը թոքոտապի ձեւով կը ներկայանար, որ շատ ծանր և աղիտաբեր հանգամանք մը ունի, արեան ընդհանուր ապականութիւն մը ըլլալուն համար :

Գերմանացիք այս անյաջողութեանէն օգուտ քաղելով սկսան Եէրսէնի շիճուկը վարկաբեկ ընել, սակայն Օբօրթօի մէջ կատարուած փորձերը լիովին ապացուցին թէ յաջողութիւնը անվիճելի է :

Դիտելի կէտը որ կայ Եէրսէնի գիւտին յաջողութեան համար, սա է թէ միայն շիճին ներարկուամբ չի բաւեր երաշխաւորելու հիւանդին ապաքինութիւնը. պէտք է որ ախտը իր աւերումը բարբովին տարածած չըլլայ մարմնոյն մէջ ինչպէս

նաև մէկ անգամ ներարկելով բաւականանալու չէ, այլ ամէն օր 10-15 հարիւրորդամէթր խորանարդի ներարկումներով մինչև հիւանդութիւնը վերջանալէն 4-5 օր յետոյ ալ շարունակելու է, ինչպէս նաև համաճարակի ամբողջ աւելողութեան միջոցին, ամէն 20 օրը անգամ մը:

Պոմպոյի մէջ Եէրսէնի շիճէն յետոյ փորձուեցաւ նաև Հաֆքինի պատուաստը որ կրկին արդանակի մէջ մշակութիւն մըն է և ուղղակի ներարկելի պատուաստելի անձին բազուկը: 100,000 հոգի պատուաստուած են այս շիճուկով և Հընդհատանի կառավարութիւնը տեսնելով անոր արդիւնքը քաջալերած է այդ դրութիւնը և ֆառանքիների խստութիւնները մեղմացուցած է:

Սակայն անտեղութիւն մը եթէ կայ Հաֆքինի դրութեան մէջ, սա է թէ պատուաստուող անձը եթէ ժանտախտի սերմը ստացած և վարակուած է, այն ատեն շատ ծանր կերպով կը հիւանդանայ և մահը անխուսափելի է. ասոր համար հարկ է որ Հաֆքինի պատուաստին հետ ներարկուի նաև Եէրսէնի շիճուկէն 10 հարիւրորդամէթր խորանարդ:

Շիճուկը կազդէ Փակոզիքօսի և ախտազատութեան երեւոյթներուն միջոցաւ որոնք դեռ լիովին բացատրուած չեն:

Փակոզիքօսը արեան սպիտակ գնդիկներու մաքառումն է. այս մաքառումը տեղի կունենայ երբ միք-


րոպ մը կամ թոյն մը կը սպրդի մարմնոյն մէջ. ասոնց դէմ անմիջապէս կը զինուին սպիտակ գնդիկները, կը պաշարեն զայն և կուղեն խղզել, ոչնչացնել. բայց երբ իրենց մէջ յաղթուողներ գտնուին, այն ատեն ուժասպառ կիյնան և կը կազմեն թարախին մէկ մասը:

Արդ, շիճաբուժութիւնը պաշտօնունի զօրացնել այդ սպիտակ գնդիկները. արգանակի մէջ տկարացած ժանտախտի պատիւները ճիւղն ներարկելով կը կրթենք, կուրի կը վարժեցնենք անոր սպիտակ գնդիկները, այսինքն պահապան բջիջները և այսպէս մէկ, մէկ սուկէս տարի զանոնք մարզելէ վերջ երբ ճիւղն մարմինը ախտազատ կըլլայ այլ ևս անոր արիւնը վարժուած կըլլայ ժանտախտի թոյնին, որով անոր շիճուկն ալ մարդուն ներարկելով տուած կըլլանք անոր զօրաւոր նիւթ մը որ անմիջապէս միջավայրը պատրաստ կընէ մաքառելու ժանտախտի նոր հասած վտանգաւոր պատիւն դէմ:

Այս արգիւնքներով կրնանք ըսել որ ժանտախտն ալ ուրիշ կարգ մը հիւանդութիւններու նման իրեն դարմանը ունի և ժամանակին հետ իր դարաւոր բարձրութենէն գլորելով այլ ևս գիտութեան համար գաղտնիք մը, անձանթ մը ըլլալէ գաղբած է:

Տօքթ. Յ. Արթիւնեան

Նանսի



ՃՈՂՈՎՈՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Ս Ա Յ Լ Ո Ր Գ Ը

— Ա՛խ, կըսէր բոունցքի կոշտ հարուածի մը տակ թնդացնելով լայն շի կուրծքը, հիչ մէկ պան մը չեմ կարօտցած. նէ՛ մարս, նէ՛ քուլերս... մինակ թուլումպաս. է՛օֆ, սանկ մէյ մը օմուզնիս կը զարնէինք տէ, ե՛րա ո՛ւ... երլաբըրմի պէս կը վազէինք մի՛... Հոս անանկ թուլումպաս մուլումպա չիկայ... պան չունիս նէ պտըտէ: Սօ՞նր:

Գրէթէ միշտ ասոր նման պատասխան մը կառնէի, երբ Համբիկին հանդիպելով հարցունէի իրեն.

— Ի՞նչ լուր, Համբիկ:

— Է՛օֆ, մի՛ հարցուներ պէ... գործ չիկայ... ա՛խ, թուլումպաս:

Գաղթականութեան հոսանքը զանի ալ հոս նետեր էր՝ անողորքէն բաժնելով զինքը ջրհանէն, որուն վրայ իր սէրը անասանման էր: Պոլսոյ քաջընթաց ջրհանկիրներէն էր, յանգուզն, հուժկու եւ կուուզան: Հրդեհներու ատեն իր շահատակութիւնները սքանչացում կը պատճառէին. հակառակորդներու դէմ եղած մոլեգին պայքարներու մէջ ահ ու սարսափ կը ձգէր, այնքան որ եամտն Համբիկ կը յորջորջէին զինքը: Իր հաւատքին, իր իտէալին, իր բոլոր ակնկալութեանցը, ըղձանքներուն, ձգտումներուն միակ առարկան ջրհանն էր: Այրող տուներու ճարճատը, անջրպետը լզող բոցներուն գալարմունքը եւ վտանգութեաներու աղեկէզ կանչուրաւորներուն համա-

նուազը իր հոգին կը յուզէին, գնդերները կը զրգոտէին ու գիւցազնական թափեր կուտային իրեն:

Հիմակ, վառնայի մէջ, այս բոլոր հաճոյական բաներէն զրկուած էր. ջրհան չիկար, ու, ո՛վ դժբախտութեան, հրդեհ ալ չիկար:

— Ստա՛մ, աս տեղ էղած կրակները քանիի՞ կառնես, կըսէր զառն արհամարհանքով, թուքո՛վս կը մարեմ պէ, թուքո՛վս...

Ու իր արհամարհանքը այն ատիճան սաստիկ էր որ անգամ մը իր բնական տան դիմացը հրդեհ պատահած ըլլալով եւ ոչ իսկ անկողնէն ելած էր դիտելու համար կրակը կամ խոյս տալու համար՝ եթէ վտանգ կար:

Մուսալլաէն հիւանդանոց տանող ճամբուն վրայ ճորճորանքով կը պտըտէր, սալքան ուսէն կախուած, մինչեւ ընքուիները իջնող թուխ ֆէսին տեղ յարդէ աղտոտ փոքր զլխարկ մը դէպի ականջը հակած եւ ձեռքերը փորուռին գրպաններուն մէջ: Բաւական ատեն այսպէս անցուց. օր մը, սակայն, տեսայ զինքը որ սայլի մը վրայ, ձեռքը խարազան մը, արշաւակի կերթար:

Համբիկ սայլապանութեան սկսած էր:

— Ախպարս, ըսաւ ինձի երբ իրեն հանդիպեցայ, անութի մնալը աղուոր պան չէ. էս պաշխասիներուն պէս հաց չեմ կրնար մուրալ: Սմա առապածի կըլլամ էղեր, ին՛րն էմ անիծեր...

* *

Ա՛լ ամէն առտու, կանուխ, Համբիկ, սայլակին հեա մէկտեղ, հիւանդանոցին դրան առջեւ կը կենար բեռ տանելու համար: Ասանկով՝ միշտ

առիթ կուսենար տեսնելու Միս Ֆը-
րէյզըրը, որ օրուան մէջ շատ անգամ
բաց լանտօի մը մէջ բազմած՝ անոր
առջևէն կանցնէր իր հմայքոտ ա-
նուշ ժպիտը շրթունքին վրայ:

Համբիկ, իր կոշտ պատեանին տակ
խանդավառ հոգիի տէր Լերիտասարդ
մը, ցնցուած էր այդ նրբակազմ,
չնորհաշուք ու քաղցր աղջկան երե-
ւոյթէն: Հազարաւոր անօթիներու
կեանք պարգեւող այդ անօտր էակին
մէջ անիկա տեսեր էր գերմարդկային
անձնաւորութիւն մը, կենսաբեր ա-
ռաքեալի մը երկնային արտայայտու-
թեամբը: Անոր ամէն մէկ անց-
քին՝ նախկին ջրհանկիրը ներկայ կը
գտնուէր հիացիկ արձանացումով,
աչքի յափշտակուած սեւեռանքով մը,
գրեթէ մեքենական շարժմամբ գլխար-
կը հանած:

— Ի՛նչ ախջիկ է, պէ՛, կըսէր
ինծի, աչքերը անձառ ու պաշտողա-
կան հիացմամբ լի: Նստելու, նայե-
լու, խնդալու պիչիմը. է՛հ, ստեղծո-
ղիք մեռնիմ . . .

Հետաքրքրութեամբ հետեւեցայ
այս քաջ ու անկեղծ տղուն կոյր ու
ամբհի պաշտամունքին աճեցմանը՝
օրիորդ Ֆրէյզըրի համար: Հիւանդա-
նոցին դրանք առջև ժամերով կ'սպա-
սէր որ ամերիկուհին դուրս ելլայ,
չատ անգամ մերժելով բեռերու փոխա-
գրութիւնը, որ իր ապրուստի միակ
միջոցն էր: Ամէն անգամ որ զանիկա
տեսնար, զինքը յուզող բոլոր խառ-
նաչիօթ ու ահագին զգացումները կը
խտացնէր մինակ հառաչանքի մը մէջ:

— Ի՛նչ ախճիկ է, պէ՛ . . .

Եթէ այդ պահուն մէկը գտնուէր
իր քով, իր գուհիկ բարբառին բոլոր
պերճանքը ու նրբութիւնը իրար կը
բերէր՝ հիացական ներբող մը կը չի-

նելու համար Ֆրէյզըրի բարոյական
ու Ֆիզիքական բոլոր երկնատուր շը-
նորհներուն մասին: Հիմակ ա՛լ գրե-
թէ մոռցեր էր բուլումպան իսկ, իր
անմոռանալի, հոգեպարար, հրաշալի
բուլումպան: Անցեալ կեանքի բոլոր
գինովութիւնները, բոլոր խնձղալից
հրճուանքները կանհետանային այս
քաղցր ու տիրապետող տեսիլքին հո-
գեցունց արբեցումին տակ: Եւ մինչ
բոլոր գաղթականները, մեծով պզտի-
կով, ամերիկուհիին մագնիսող ոլոր-
տին մէջ կը դառնային՝ սփոփուելու
համար անոր տաք շնչէն, ինք, Համ-
բիկ, հեռու կը մնար անկից, անոր
մերձենալու այնքան դիւրին յանդըգ-
նութիւնը իր մէջ չզգալով, ինք որ
բոցերու դէմ կը մաքառէր եւ հրդեհի
գեհներէն կանցնէր անվախօրէն:

Հեռուանց, բոլոր կարելի յար-
գանքները կը մատուցանէր անոր,
ճամբուն վրայ սպասելով գլուխը
բաց, օրիորդին հանդէպ տգեղ վար-
մունք ունեցողներուն հետ կատաղօ-
րէն կուռելով:

*
* *

Օր մը, սակայն, հիւանդանոցին
դռները փակուեցան, ու Ֆրէյզըր մեկ-
նեցաւ ա՛լ չվերադառնալու համար:
Այդ օրը, Համբիկ, եղածէն անտեղ-
եակ, սովորականին պէս զնաց ժամե-
րով սպասեց դրան առջև, սայլակին
վրայ նստած: Եկող գացող չիկար.
հարցուց փնտուց, ու զեփ զեղին ե-
ղաւ երբոր ըսին թէ ան գացած էր:
Գլխահակ, ձիուն սանձէն բռնած,
զանդաղօրէն հեռացաւ. ու ա՛լ մէյ
մըն ալ չերեւցաւ հիւանդանոցին շըր-
ջակաները:

Երբ քանի մը ամիս ետքը իրեն

հանդիպեցայ փողոցը, աճապարանքով քովս եկաւ լուր հարցնելու ինկիլիզին ախօրիկէն:

— Աղէկ է եղեր, ըսի. քեզի բարեւ ըրիր է, աւելցուցի կատակելով:

— Ծօ ի՞նչ կըսես... էս վո՞վ էմքի ինծի բարեւ պիտի խրկէ... Անիկա՛...:

Ու իր արեւակէզ բերտ գէմքը՝ հեռաւոր յիշատակներու վերբերումէն՝ տեսակ մը երազական անուշութիւն կստանար:

— Ի՛նչ ախճիկ էր, պէ՛, կը մըրմըռար հեռանալով իր սայլակին հետ:

Անկից ետքը ա՛լ քանի գէմս ելլար, լուր կը հարցնէր գանատուհիին մասին, որուն իր վրայ թողած խորաքանդակ տպաւորութիւնը՝ ժամանակի ընթացքին հետ՝ փոխանակ մեղմանալու, հետզհետէ կը սաստկանար, փոխուելով այն տեսակ մը յորդելակ փղձկուծին զոր կեանքի ազդողական գէպքերը կը յարուցանեն մէջդ, քանի անոնք նուազին անցեալի մշտային հորիզոնին տակ:

Կնոջ շնորհալի գէմք մը, սրպիսին էր Ֆրէյզըր, մոզական հարուածով մը յեղաշրջած էր Պոլսոյ հրգեհներուն բերտ, անսանձ այդ շահատակը: Հեղ, ազնիւ, խօսմտուկ եղած էր հիմակ ան: Անսանձան, անպարագրելի բարութիւնը որուն ճառագայթումը տեսած էր թափանցիկ նուրբ էակի մը վրայ, խունկի բուրման պէս անուշաւէտած էր իր հոգին, վեհին ու ազնիւին համար պաշտանք ու երկրպագութիւն բերելով հոն:

* * *

Հիւսիսի քամին անեղատոյլ կը մտնէր: Բալթօսի մէջ սեղմուած մըս-

կոտորէն, տնոր գէմ կը մաքառէի ճամբաներուն վրայ: Յանկարծ ետեւէս սայլավար մը նշմարեցի որ գլուխը կնգուղի մը մէջ պլլած՝ ձիուն սանձը կը քաշէր մեծ տաժանքով: Ծանօթ ձայն մը բարեւեց զիս: Համբիկն էր:

Հիմա քովքով կը քալէինք՝ գրէթէ առանց բառ մը արտասանելու, վասնզի սառնաչունչ հովը բերան բանալ չէր խտար:

— Լուր մը ունի՞ս, հարցուց վերջապէս սայլորդը, անհամբեր: Կըսեն կոր քի նորէն հոս պիտի կայ... իրա՞ւ է:

— Չէ՛, ճանրմ՛, ըսի գրէթէ անգիտակցաբար, ո՞ւր պիտի գայ. խեղճ աղջիկը մեռեր է եղեր... չիմացա՞ր, լրագիրները գրեցին...:

— Վա՛յ...:

Համբիկ ուրիշ ձայն չ՛անեց: Կընգուղին ծալքերուն տակ իր գէմքը խուլ տառապանքի մը կծկումը արտայայտեց: Ուժգնութեամբ քաշեց ձիուն սանձը, ու տեսայ որ հովին ալիքները կնգուղին վրայ ինկած կաթիլներ խօլականօրէն կը թոցնէին կը տանէին:

Սայլորդը կուլար:

Ե. ՍՐՄԱՔԵՇԻՍԱՆԼԵԱՆ

Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Պ Է Լ Ք Ե Ի Լ Է Ս Ա Ն

Իւլի-օրիբէ Յոյսանի զերման պատկերազարդ հանգէսին սեպտեմբեր 20 թիւին մէջ հրատարակուած յօդուածէ մը քաղենք հետեւեալը.

Քիւրտերուն տօքթ. Պէլքի վրայ կատարած մէկ յարձակումէն յետոյ, երկու երկրախոյզներուն՝ Տօքթ. Պէլքի և տօքթ. Քարլ Ղէմանի նպատակն էր հետազոտութիւններ կատարել գաղթեական ցեղին վրայ որ կը բնակէր կէօքչայի, Ուրմիոյ և վանայ լիճին մերձակայքը. կարեւորագոյն կէտն էր վանայ բեւեռագրերը ժողվել և որքան կարելի է նորեր երեւան հանել, ինչպէս նաև պատրաստել Հայաստանի մէկ նոր քարտէսը : Հետախուզութիւնները յուսացուածէն աւելի արդիւնաւոր եղան, անտնկ սրայօսը գաղթեացոց պատմութեան ու լեզուի մասին ցարդ հաւաքուած նիւթերուն կրկնապատիկը ձեռք բերուած է : Ճամբորդները յառաջացան վանէն մինչև Մալաթիա և Գավրէթ մէկ կողմէն, և մինչև Թորոսանայ միւս կողմէն : կէօքչայէն և Ուրմիայէն դուրս գալով յաղեցան հին գաղթեական թագաւորութեան սահմանները որոշել, թագաւորներուն ամբողջական ցանկովը : Գաղթեացիները Ասորեստանի թագաւորներէն յաճախ նուաճուած Նաիրիներուն առաջնորդող ցեղը պէտք է նկատել : վանայ բերդաքաղաքը և Այդեստանը գաղթեական թագաւորութեան կեդրոնն էր, որուն պատմութեանը կրնանք հետեւիլ Քրիստոսէ առաջ 1000 էն մինչև 600 տարի : Իսրէլինիս թագաւորը գաղթեական բերդաքա-

ղաքը հիմնեց վանի ժայռերուն վրայ : Թօքրագրալէի բերդաքաղաքը՝ Մարտուր թագաւորին պարտութենէն ետքը հիմնուեցաւ Ռուզաս Ա. ի ձեռքով, որ այս պարտութեամբ Գաղթիս չաստուծոյն եղած նախատինքին վրէժը լուծեց, ինչպէս ցոյց կուտայ սիւն մը Թորոսանայի մէջ : Արեւելքի հին տիրապետողներուն մէջ լուսագոյններէն մէկը պէտք է նկատել գաղթեացի թագաւոր Մէնուաս որ ջրանցներու և ջրմուղներու շինութեամբ իր ժողովրդին բարեկեցութեանը հոգ տարաւ : Այս շինութիւնները որոնց կը վերաբերի նաև Շամիրամի ջրանցքը վանի միջնաբերդին հարաւակողմը՝ մեծ մասամբ տակաւին կը գործածուին այսօր, ինչպէս ասկէց 3000 տարի առաջ : Յիշեալ ջրանցքը տակաւին ցոյց կուտայ հսկայ որմեր 12-15 մետր բարձրութեամբ և 4-5 մետր հաստութեամբ : Գաղթեական իշխանութիւնը պէտք է նկատել իբրև զուտ աստուածպետութիւն, ուր Գաղթիս չաստուածին պատուէրը օրէնք էր :

Երկրախոյզները մետաղագործական սքանչելի շինուածներ գտան, ու միեւնոյն ժամանակ ճշտեցին այն ճամբան ուսկից տեղի ունեցաւ Նահանջ Բիւրուցը, Գաննեփոնի առաջնորդութեամբ : Հայաստանի հարաւային արեւելեան արգաւանդ գաղաբերուն համար ասորեստանցոց ու գաղթեացոց միջև տեղի ունե-

ցած մշտապես կռիւներուն մէջ՝ գաղթէացիները Քրիստոսէ 800 տարի առաջ վանուեցան Ուրմիա լճին մօտերը. մինչեւ հիմա արձանագրութիւնները որոշապէս ցոյց կուհին արչաւանքներուն ճամբաները : Տօքթ. Պէլք վանի մօտ կրցաւ նոյն իսկ գտնել Հայաստանի քարի դարէն մնացած նախապատմական նըշխարներ, որոնց կոշտ ձեւը հաւկապակեր մը կ'ընծայէ ջրային և ուրիշ հոյսկապ շինութիւններու հետ :

Վանի մօտ Գաղթիսի սաճարին հիմերուն մէջ գտնուած կարմիր, ճերմակ և սեւ քարերէ կազմուած խճանկարները տարօրինակ ապաւորութիւն մը կը թողուն, նոյնպէս խոշոր հողաչէն կարասները, թօքրապքայէի բերդաքաղաքին նկուզներուն մէջ :

Գաղթէական տէրութիւնը կանահեանայ պատմութեան մէջէն շուրջ 600 տարի առաջ Քրիստոսէ. 100 տարի հայերուն ձեռքը կանցնի թօքրապքայէի բերդաքաղաքը և գաղթէացիք զէպի լեռները ետ կը մղուին : Տրապիզոնի շուրջը տակաւին կը բնակին գաղթէացւոց մնացորդներ : Գերմանական այս հեռազօտութիւնը իր արդիւնքներով իրաւամբ արժանի է գերմանական զարգացած դասակարգին շահագրգռութեանը :

ՊՈԼՍԱԿԱՆ ԿԱՄՍԿԱՆԻ

Պոլիս, 14 Սեպտեմբեր 1900

Ութը տասը օրէ ի վեր արհաւիրքի անտանելի շրջանի մը մէջ չսկսած ենք կրկին ապրել : Զերբակալութիւններու, խուզարկութիւններու և խիստ հարցաքննութիւններու սաւրափ մըն է չորս կողմէն կարկուտի նման կը տեղայ : Ընդ պիտի երթայ ասոր վերջը, չգիտնե՞ք. միայն սա յայտնի է որ, կարծեմ, կամաց կամաց ամենքս ալ պիտի վերսկսինք ուխտագնացութեան այն երկար շարքին զոր կընէինք ասկից չորս տարի առաջ, Կալաթա-Սարայէն զէպի Պապը-Չապթիյէ և անկից ալ զէպի բանտ :

Ժամէ ժամ անձկութիւննիս կը բազմապատկուի, սարսափնիս կաւելնայ և ի զէն կոչուած զինուորի նման պատրաստուած ենք ընդունելու ուտիկաններու այցելութիւնը և լացի, ողբերու մէջէն ցորեկը կամ գիշերը անցընելու երթալ զընտանը, որ այս անգամ ալ չպիտի բաւէ օթեանոցներու բազմութեան, եթէ իրերու այս վիճակը շարունակուի :

Ալիքսան անուն Հնչակեան մը վերջերս իր Փրանսացի կնոջ հետ Նէնի-Մահալլէ պանդոկի մը մէջ կը ձերբակալուի : Ոստիկանութիւնը այդ անձը իբրև շատ վտանգաւոր մէկը կը համարէ ու կը փնտռէ Զարեհ անուն ուրիշ մէկն ալ որ Ալիքսանի հետ յարաբերութեան մէջ է եղեր : Զարեհ թէև դեռ ձերբակալուած չէ, բայց իր տունն ի Բերա և Ալիքսանի բընակած Նէնի-Մահալլէի պանդոկը գրե-

թէ չղթայի ներքեւ առնուած են: Պանդոկի մէջ մէկ ամիսէ ի վեր երթեւեկող անձերուն ցուցակը առնուելով, գրեթէ ամենքն ալ հետզհետէ կը ձերբակալուին. ասոնց մէջն է նաեւ Տիգրան Արփիարը որ Մ... շարաթաթերթը կը հրատարակէր: Այս քանի մը օրերուն մէջ հարիւրէն աւելի հայեր բանտարկուած են ասոնց պատճառի եւ շատ մը գաւառացիներ ալ իրենց տեղերը կը խրկուին:

Գէորգ Պիւլպիւլեան անուն լրտեսը որ ստաիկանութեան աջ բաղուկներէն մին էր, բանտարկուած է պատճառը չգիտցուիր. միայն կը զարմանանք որ ինչպէս թուրքին հաւատարիմ գործակառար այդ կեղտոտ արարածն ալ հաշիպիսն սխալի վանդակին բնակիչ կանուանուի:

Երէկ ստաիկանութեան նախարարը Ազգ. Հիւանդանոցին տնօրէնը կը կանչէ եւ կ'ըսէ թէ «Դուք Ձարեհը եւ ուրիշներ հիւանդանոցը պահեր էք եււայն», տնօրէնը կուրանայ բոլորովին, որուն վրայ նախարարը կը պահանջէ որ վերջին մէկ երկու տարուան մէջ հիւանդանոց ընդունուած անձերուն մէկ ցուցակը ներկայացուի իրեն՝ պատուիրելով որ ասկից յետոյ ամէն օր ժուրնալ արուի հիւանդանոց ելլող մտնողներու մասին: Օրմանեանի ազգական եւ միանգամայն քաղաքական ժողովի անդամ ու Գաբուշէհեա Տէր-Ներսէսեան անուն գաղանին եւ օգնական Արթին Գասպարեանին օր մըն է բացուեցաւ: Ասոնք ամէն խիղճ եւ զգացում մէկ կողմ դնելով լիաբուն կաշառք կը պահանջեն, կ'առնեն աս ու ան ազատելու համար եւ բան մը չեն ընէր կամ չեն կարող ընելու:

Պատրիարքը երէկ ստաիկանութեան

նախարարին դիմում ըրեր է Տէր-Ներսէսեանի գործերուն մղում տալու համար. բայց պարզապէս վաճառեւ է. ահա մարդ մը որ ոչ ազգը կըրցաւ սիրաշահիլ եւ ոչ ալ տէրութեան մէկ պաշտօնեան, մինչդեռ հոգևով մարմնով պաշտօնին փարած կը մնայ անհոգ, անփոյթ եւ դայթակղեցուցիչ լրբութեամբ մը:

Երէկ նոր քէսէրէ մը եկած է Աւլիէյէն որ կը հրամայէ եկեղեցիներու մէջ կարդացուած շարականներէն եւ ժամագիրքերէն վերցնել «Հայաստանեայց» բառը: Առ հասարակ բոլոր եկեղեցականները պատրիարքին դէմ սրուած են, որ անփութօրէն իր շահերը միայն նկատողութեան առնելով չի ջանար եկեղեցւոյ մէջ եղած ոտնձգութիւններուն իսկ առաջք առնել: Անոնք որ կրօնական ժողովի անդամ են, թուով վեց, եւ մերժած էին Կիլիկիոյ կաթողիկոսին ընտրութեան համար ցանկ ներկայացնելու առաջարկը, ասդին անդին կը գանդատին թէ պատրիարքը ժողովին որոշումները ճշգիւ չի տեղեկագրեր եւ Սահմանադրութեան տրամադրութիւնները չի յիշեցներ Դրան. մինչեւ իսկ երեսին ալ կուտան. Օրմանեան էֆէնտիքս թծաղով մը կը պատասխանէ եղեր. «սպառնացէ՛ք ալ, որո՞ւ կըսպասէք, ո՞վ եղաւ մինչեւ հիմա եղած սպառնալիքներէն վախցողը որ ձեռնէ ալ վախնամ»:

Օրմանեանի կողմանէ գաղտնի հրահանգ ղրկուած է Կիլիկիոյ թեմերուն որպէս զի արտնջան թէ՛ «այլ եւս մէնք առանց կաթողիկոսի չենք կրնար մնալ». ասով կը յուսայ թէ ցանկը տալու հակառակող Կրօն. ժողովի վեց արիասիրտ եկեղեցականները նեղը մնալով ուզեն չուզեն պիտի

զիջանին եւ ցանկը պիտի ընդունին: Ռօպէս եւ Տէր-Ներսէսեան՝ երկուքն ալ պատրիարքին ազգականները՝ շարունակ կառավարական եւ Երլտրզի պաշտօնեաներուն կրօնն եղեր թէ ասոնց ամենուն պատճառը Մանկունի եւ Յովհաննէսեան եպիսկոպոսներն են, որոնցմէ երես աննելով միւս եւ կեղեցականներն ալ ընդգրկուած իւր կրնեն եւ կը ջանան ժողովուրդին մէջ գրգռումներ առաջ բերել: Թէեւ միջեւ հիմա այս եպիսկոպոսներուն ուղղակի սպառնալիք մը չեղաւ, սակայն Ռօպէս եւ Տէր-Ներսէսեան գահակալութեան տարեգարձին առթիւ վարձատրուեցան եւ աստիճանի բարձրացում ունեցան. ասիկա ցոյց կուտայ որ յաջողութեան ճամբուն մէջ են եւ օր մը չէ օր մը նպատակնուն պիտի հասնին:

Օրմանեան 20-30 ական ոսկի հաւաքեց հարուստներէն, որպէս զի Սուլթանին կոթող մը նուիրէ: Սուլթանը առանց այդ կոթողին հանգիստ չպիտի ընէր, բայց ասիկա չէր որ մտածեց Օրմանեան, իր քսակը ունէր աչքին առաջ եւ ասոր համար ժողոված գրամին հազիւ կէս արժողութեամբը պատրաստեց այդ սուլթանավայել կոթողը եւ մնացածը կոկորդը անցուց հարուստները հասկցան այս խարէութիւնը բայց չհամարձակեցան ձայն ձուռ հանելու: Ոչ ոք հաշիւ ուզեց եւ արդէն հաշիւ տալու սովորութիւնը այնքան ատելի եղած է Օրմանեանի որ այդ բանն իսկ ջիղերը կը գրդոէ եւ անմիջապէս կըսկսի ոռնալ՝ բերնին թուքերը չորս կողմ ցայտեցնելով:

Նպաստից խեղճ անտուկն ալ Օրմանեանի քմահաճոյքներուն ենթարկուած է. իր տան մասնինն նման սկսած է գործածել զայն եւ վայ աւոր որ բերանը կը բանայ:

Այվաղեան չեպիսկոպոսը օրուան մարդն է այս միջոցին. Օրմանեանի սենեակէն ոտքը կելլէ գլուխը չելլեր: Զիրար լաւ գտան նման անցեալով եւ միեւնոյն խորով շինուած այս երկու հրէշները.....

Կրօնն թէ ամէն չարագործ իր պատիժը կը գտնայ, բայց ըսէք, կաղաչեմ, ե՞րբ, զեւ սպասե՞նք.....

ՄԺՂՈՒԿ

Վ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Կ

— Սպաղանքէն Ռիւթէրի տրուած տեղեկութիւնները կիւնացնեն թէ հրբախանատար Ալի փաշա, որ Սպաղանքի ջարդին հետեւանքով Բաղէշի զինուորական հրամանատարի պաշտօնէն եւ կանչուած էր, օգոստոս 22ին այդ քաղաքէն Երզնկա մեկներ է:

Մեկնումին նախորդ օրը Ալի փաշա իր ներկայութեան կառավարութեան պաշտօնատուն հրաւիրեց Բաղէշի հայոց առաջնորդը եւ գաւառական ժողովի աշխարհական անդամները եւ պահանջեց որ իրենց ստորագրութեամբ վաւերացնեն իբր թէ Սասուն գաւառի բնակիչներէն զրկուած ուղերձ մը որ 20 ստորագրութիւն կը կրէր: Ուղերձին մէջ ըսուած էր որ եւրոպական թերթերու Սպաղանքի մասին զրածները ըլլորովին յերիւրուած ստոթիւններ էին, թէ ոչինչ չէր պատահած Սպաղանքի մէջ խաղաղութիւնը վերգովող, եւ թէ չնորհիւ Սուլթանի հոգածութեան եւ Ալի փաշայի հայրական խնամքներուն, հանգարտութիւնը միշտ կը տիրէ:

Սոաջնորդն ու իր ընկերները մերժեցին ստորագրել աւարկելով թէ իրենք տեղեկութիւն չունին Սպաղանքի մէջ անցած զարձածէն, եւ թէ պէտք է տեղոյն վրայ քննութիւն մը բանալ: Ալի փաշա նախ հաւանեցաւ, բայց քանի մը ժամ ետքը փոխեց որոշումը եւ սպառնալիքներ ըսկաւ ընել, եթէ ընդգրկմանն ուղերձը ստորագրելու: Ասոր վրայ հայերը տեղի տուին եւ ուղերձը ստորագրեցին:

Отговорникъ Н. Драгулевъ
 Печатающая «Ориенталъ» — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Հաստատում 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական Նախարարութեան 11128 թիւ արտօնադրով

Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Կ'ընդունուին գիշերօթիկ աշակերտներ՝ գոհացուցիչ պայմաններով :

Առողջ մեռնող, կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսմանց եւ գիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին : Օտար ընդունելէն պարտաւորիչ են պուլկարելէն եւ ֆռանսերէնը : Փափաքողները կ'ընան հետեւիլ նաեւ անգլիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Զութակի եւ դաշնակի դասեր ալ կը արուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար՝ դիմել հիմնադիր-անօրէնին, հետեւեալ հասցեով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒԳԵԱՆԻ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գ. ՏԱՐԻ

Նախորդ տարիներու ուղղութեամբը գրուած՝ կը պարունակէ ազգային-պատմութեան վերաբերեալ շատ շահեկան եւ օգտակար կտորներ, ինչպէս են Գրաբար եւ Ոսկեգար, Հայոց հին կրօնքը, Առեւտուրը հին հայոց մէջ, Կիլիկիա, Շնորհալի, Հայ պատրիարքներ, Սահմանադրութիւն եւ այլն. խորագրով գրուիները :

Թուղթը շատ լաւ, տպագրութիւնը մաքուր : Գինն է 1 ֆր. — Բ. ՏԱՐԻին գինը 1 ֆր. — Ա. ՏԱՐԻինը 60 սանթ. :

Դիմել յօրինողին սա հասցեով՝ J. G. BONDJOUKIAN, VARNA, (Bulgarie).

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

«Չ ՎԱՌՆԱ»

Երկրորդ քաղ, Շիրյենսես փողոց, (Մագալլը յեշմէի կից)

Կը սովորուին հայերէն, պոլիարերէն, գաղղկերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով սոյցեատման, հասցեատման, հարսանեկան հրատարակիչ, սովորարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, քաղիք, եւ այլն:

Գտնաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տառեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵՍ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԳԻՆԵԼԸ ՅՈՅԹ ԳԻՒՂԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նշուրեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).